«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատի ակադեմիայի
հիմնադիր-տնօրեն Սմբատ Լպուտյան

**24.12.2015**թ.

# ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ 6-ՐԴ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ
# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2016թ. հունվարի 8-16-ը Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ ք. Երևան, Շչեննկո 34) կանցկացվի Անդրանիկ Մարգարյանի 6-րդ հուշամրցաշարը: Մրցաշարին կարող են մասնակցել մինչև 18 տարեկան պատանիներ և աղջիկներ: Մրցաշարը կանցկացվի տարիքային խմբերով՝ *Ա4 մրցաշար* - մինչև 10տ., *Ա3 մրցաշար* - մինչև 12տ., *Բ մրցաշար* - մինչև 12 և 10տ. աղջիկներ, *Ա2 մրցաշար* - մինչև 14տ., *Ա1 մրցաշար* - մինչև 18տ., շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով :

Մրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է **1 500 000** ՀՀ դրամ: Մրցաշարերի բոլոր հաղթողները կպարգևատրվեն մեդալներով, հուշանվերներով և իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի շախմատի ակադեմիայի հավաքներին:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով և սև գույնով խաղացած պարտիաների քանակով, իսկ գումարը կբաշխվի հավասարաչափ:

Մրցաշարերում մասնակցության իրավունք ունեն այն շախմատիստները, ովքեր ունեն.

Ա1 մրցաշար՝ 2000 և ավելի ազգային գործակից (աղջիկներին՝ առնվազն I կարգ)
Ա2 մրցաշար՝ առնվազն I կարգ
Ա3 մրցաշար՝ առնվազն II կարգ
Ա4 մրցաշար՝ առնվազն III կարգ (2008 և 2009թթ.՝ առնվազն IV կարգ)
Բ մրցաշար՝ առնվազն III կարգ (2008 և 2009թթ.՝ առնվազն IV կարգ)

Ա1 և Ա2 մրցաշարերում կհաշվարկվի միջազգային (ՖԻԴԵ) վարկանիշ:

**Ժամակարգը**՝ 90 րոպե մինչև խաղի ավարտը (յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով):

***Ժամանակացույցը***
***Ա4, Ա3 և Բ մրցաշարերի համար՝***

| | |
|---|---|
| 8 հունվարի – 1 տուր | 12:00 |
| 9 հունվարի – 2 տուր | 11:00 |
| 10 հունվարի – 3 տուր | 11:00 |
| 11 հունվարի – 4 տուր | 11:00 |

***Ժամանակացույցը***
***Ա2 և Ա1 մրցաշարերի համար՝***

| | |
|---|---|
| 8 հունվարի – 1 տուր | 15:30 |
| 9 հունվարի – 2 տուր | 14:30 |
| 10 հունվարի – 3 տուր | 14:30 |
| 11 հունվարի – 4 տուր | 14:30 |

| | | | |
|---|---|---|---|
| 12 հունվարի – 5 տուր | 11:00 | 12 հունվարի – 5 տուր | 14:30 |
| 13 հունվարի – 6 տուր | 11:00 | 13 հունվարի – 6 տուր | 14:30 |
| 14 հունվարի – 7 տուր | 11:00 | 14 հունվարի – 7 տուր | 14:30 |
| 15 հունվարի – 8 տուր | 11:00 | 15 հունվարի – 8 տուր | 14:30 |
| 16 հունվարի – 9 տուր | 11:00 | 16 հունվարի – 9 տուր | 14:30 |
| 16 հունվարի – փակման արարողություն | 19:00 | 16 հունվարի –փակման արարողություն | 19:00 |

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Հունվարի 7-ին, ժամը 15:00-ից հետո գրանցում չի կատարվում:
Մանրամասների համար զանգահարել 010-448479 հեռախոսահամարով Մանե Բազիկյանին: